

Ինչ կուզենալի իմանալ  
Միացյալ Ազգերի  
մասին

*(Միջին և բարձր դասարանցիների համար)*



Երևան, 1998

## Միավորված ազգերի Կազմակերպություն. Ներածություն

### 1. Ի՞նչ է Միավորված ազգերի կազմակերպությունը:

ՄԱԿ-ն աշխարհում խաղաղություն, տնտեսական և սոցիալական առաջընթաց ապահովելու նպատակով կամավոր հիմունքներով միավորված անկախ երկրների կազմակերպություն է: Պաշտոնապես ստեղծվել է 1945թ. հոկտեմբերի 24-ին՝ համախմբելով 51 անդամ երկրներ: Այսօր այդ թիվը հասել է 185-ի: ՄԱԿ-ից դեռ ոչ մի երկիր դուրս չի եկել: Միայն Ինդոնեզիան է 1965թ. ժամանակավորապես լքել ՄԱԿ-ը հարևան Մալազիայի հետ հակասության մեջ լինելու պատճառով և վերադարձել է մեկ տարի անց:

### 2. Այսպիսով, ՄԱԿ-ը նման է մի համաշխարհային կառավարության՞:

Ոչ: Կառավարությունները ներկայացնում են երկրներ և ժողովուրդներ: ՄԱԿ-ը չի ներկայացնում ոչ հատուկ կառավարություն, ոչ էլ մի որևէ ազգ: Նա նման է անկախ պետությունների մի ընկերության, որը կարող է գործել միայն այնպես, ինչպես իր անդամներն են կամենում: Նա ավելի շատ նման է համաշխարհային մի ֆորումի, որտեղ անկախ ազգերը հավաքվում են՝ քննարկելու այն հիմնարար հարցերը, որոնք ինչ-որ կերպ անդրադառնում են իրենցից յուրաքանչյուրի կամ բոլորի վրա:

### 3. Գոյություն ունի՞ արդյոք կանոնների և սկզբունքների մի ժողովածու, որով ՄԱԿ-ն առաջնորդվում է իր գործունեության ընթացքում:

Այո՛, Միավորված ազգերի կանոնադրությունը: Դա աշխատանքային սկզբունքների մի ժողովածու է, որտեղ սահմանվում են յուրաքանչյուր անդամ երկրի իրավունքներն ու պարտականությունները, նաև անելիքները՝ առաջադրված նպատակներին հասնելու համար: Դառնալով ՄԱԿ-ի անդամ՝ տվյալ ազգն ընդունում է կանոնադրությունում նշված նպատակներն ու կանոնները: 1945թ. հունիսի 26-ին Սան Ֆրանցիսկոյում 50 ազգերի ներկայացուցիչներ ստորագրեցին ՄԱԿ-ի կանոնադրությունը: Լեհաստանը, որը ներկայացուցիչ չէր ուղարկել իր հետպատերազմյան կառավարությունը դեռևս ձևավորված չլինելու պատճառով, ստորագրեց ավելի ուշ և այդպիսով դարձավ ՄԱԿ-ի 51-րդ անդամը: Միացյալ Նահանգներին՝ որպես հյուրընկալող երկրի, առաջարկվեց պահպանել կանոնադրության բնագիրը, որն ի պահ տրվեց Վաշինգտոնի Ազգային արխիվին, իսկ ճշգրիտ պատճենը ցուցադրված է Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակում:

### 4. Որո՞նք են ՄԱԿ-ի նպատակները:

ՄԱԿ-ը 4 հիմնական նպատակներ ունի.

- պահպանել խաղաղություն ամբողջ աշխարհում,
- հաստատել բարեկամական հարաբերություններ ազգերի միջև,
- օգնել համատեղ ջանքերով ընչազուրկ մարդկանց՝ բարելավելու իրենց կենսապայմանները, հաղթահարելու սովը, հիվանդություններն ու անգրագիտությունը և հարգանք սերմանել միմյանց իրավունքների և ազատությունների նկատմամբ,
- օգնել ազգերին այս նպատակներին հասնելու համար:

### 5. Ինչպե՞ս ծնունդ առավ ՄԱԿ-ը:

ՄԱԿ-ի գաղափարը հղացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր օրերին (1939-1945): Միլիոնավոր մարդիկ զոհվում էին, նույնքան էլ՝ տեղահանվում: Զաղաքներն ավերվել էին: Աշխարհի այն առաջնորդները, ովքեր միմյանց ձեռք էին մեկնել պատերազմին վերջ տալու համար, գիտակցում էին, որ անհրաժեշտ է ստեղծել խաղաղության հասնելու և հետագա

պատերազմները կանխելու մեխանիզմներ: Նրանք գիտակցում էին նաև, որ դա հնարավոր է անել միայն այն դեպքում, եթե բոլոր ազգերը միավորվեն մեկ ընդհանուր կազմակերպության մեջ և համատեղ գործեն:

ՄԱԿ-ը մի օրում չի ստեղծվել: Նախքան կազմակերպության ստեղծումը պահանջվեց նախապատրաստական գործողությունների մի քանի տարի: Գործունեությունն այսպիսին էր.

Միացյալ Նահանգների նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը և Միացյալ Թագավորության վարչապետ Ուինսթոն Չերչիլը 1941թ. օգոստոսի 14-ին աշխարհի խաղաղության ծրագիր հռչակեցին, որն անվանեցին Ատլանտյան խարտիա:

1942թ. հունվարի 1-ին 26 երկրների ներկայացուցիչներ հանդիպեցին Վաշինգտոնում և ստորագրեցին Միավորված ազգերի կազմակերպության հռչակագիրը: Նրանք երդվեցին հաղթել պատերազմում և ընդունել Ատլանտյան խարտիան:

1943թ. հոկտեմբերին Չինաստանի, Խորհրդային Միության, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների ներկայացուցիչները հանդիպեցին Մոսկվայում և որոշեցին ազգերի կազմակերպություն հիմնել պատերազմի ավարտից հետո խաղաղությունը պահպանելու նպատակով: Այդ պայմանագիրը հայտնի է որպես Մոսկովյան հռչակագիր:

1944թ. ամռանն ու աշնանը Վաշինգտոնում կայացած համաժողովում մշակվեցին միջազգային կազմակերպության առաջին որոշակի ծրագրերը: Այդ համդիպումը հաճախ անվանում են Դումբարթն Օուքսի համաժողով, քանի որ տեղի է ունեցել համանուն վայրում:

1945թ. փետրվարին ԱՄՆ նախագահ Ռուզվելտը, Միացյալ Թագավորության վարչապետ Չերչիլն ու ԽՍՀՄ քարտուղար Իոսիֆ Ստալինը Խորհրդային Միության Յալթա քաղաքում համաժողով անցկացրին: Այստեղ էր, որ նրանք համաձայնության եկան Անվտանգության խորհրդում կիրառվող քվեարկության համակարգի հարցում: Նրանք որոշեցին նաև ազգերի համաժողով հրավիրել Սան Ֆրանցիսկոյում:

1945թ. ապրիլի 25-ից հունիսի 26-ը տեղի ունեցավ Սան Ֆրանցիսկոյի համաժողովը, որին մասնակցեցին 50 երկրների ներկայացուցիչներ: Նրանք ուրվագծեցին և հունիսի 26-ին միաձայն ընդունեցին Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը և Միջազգային նոր դատարանի օրենքները:

1945թ. հոկտեմբերի 24-ին, երբ հիմնադիր երկրների մեծամասնությունն Անվտանգության խորհրդի հինգ հիմնական անդամների հետ միասին ստորագրեց ՄԱԿ-ի կանոնադրությունը և հրապարակայնորեն ընդունեց այն, պաշտոնապես ծնվեց ՄԱԿ-ը: Այդ է պատճառը, որ հոկտեմբերի 24-ը համարվում է Միավորված ազգերի կազմակերպության ծննդյան օրը և ամբողջ աշխարհում նշվում որպես ՄԱԿ-ի օր:

## **6. Ինչպե՞ս է առաջացել ՄԱԿ անվանումը:**

ՄԱԿ անվանումն առաջարկել է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը: Պաշտոնապես այն առաջին անգամ օգտագործվել է 1942թ., երբ 26 երկրների ներկայացուցիչները ստորագրեցին Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը: Սան Ֆրանցիսկոյի համաժողովի բոլոր մասնակիցները համաձայնվեցին ընդունել այդ անվանումը՝ ի հիշատակ այդ իրադարձությունից մի քանի շաբաթ առաջ վախճանված նախագահ Ռուզվելտի:

## **7. Արդյո՞ք առաջին անգամ էր նման կազմակերպություն հիմնվում:**

Ոչ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919թ., ստեղծվել էր Ազգերի լիգան: Ինչպես և ՄԱԿ-ի, նրա հիմնական նպատակը աշխարհում խաղաղություն պահպանելն էր:

Ցավոք, ոչ բոլոր ազգերը միացան Լիգային: Միացյալ Նահանգներն, օրինակ, երբեք անդամ չի եղել: Որոշ անդամ երկրներ հետագայում կամ դուրս եկան կազմակերպությունից, կամ հրաժարվեցին նրա որոշումներն ընդունելուց: Իսկ Լիգան համապատասխան լիազորություն չունեք, որպեսզի հարկադրել իր որոշումները: Լիգայի ձախողումն արագացրեց հակամարտության ընթացքը, որը և հանգեցրեց Երկրորդ համաշխարհային պատերազմին: Չնայած Լիգայի կազմալուծմանը՝ այն համընդհանուր կազմակերպություն ունենալու հույս վառեց: Արդյունքում ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը:

## **8. Որտե՞ղ է ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակը:**

ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: Լոնդոնում կայացած Գլխավոր ասամբլեայի առաջին հավաքին որոշվեց, որ ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակը մշտապես գտնվելու է Սիացյալ Նահանգներում: ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակի չորս մասնաշենքերն են. Գլխավոր ասամբլեայի ցածրագմբեթ շինությունը, Քարտուղարության ապակյա և մարմարե 39 հարկանի աշտարակը, գետի երկայնքով տեղակայված Համաժողովների ցածրահարկ ուղղանկյուն շենքը և համալիրի հարավ-արևմտյան հատվածում գտնվող Դ-ագ Համարշյուղի գրադարանը:

ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակի ամբողջ տարածքն ու համալիրը միջազգային գոտի են համարվում: Այսինքն՝ ՄԱԿ-ն ունի սեփական դրոշ, իր տարածքը հսկող անվտանգության ծառայողներ: Թողարկում է նաև իր նամականիշները:

## **9. Ինչպիսի՞ն է ՄԱԿ-ի կառուցվածքը:**

ՄԱԿ-ն իր գործունեությունը ծավալում է ամբողջ աշխարհում իր 6 հիմնական մարմինների միջոցով:

Դրանք են.

- Գլխավոր ասամբլեան
- Անվտանգության խորհուրդը
- Տնտեսական և սոցիալական խորհուրդը
- Հոգաբարձուների խորհուրդը
- Միջազգային դատարանը
- Քարտուղարությունը

Այս բոլոր մարմինները գտնվում են Նյու Յորքի Կենտրոնական գրասենյակում, բացառություն է Միջազգային դատարանը, որը գտնվում է Հաագայում (Նիդեռլանդներ):

ՄԱԿ-ին առընթեր գործում են 14 այլ կազմակերպություններ, որոնք համարվում են մասնագիտացված գործակալություններ: Նրանց գործունեությունն առնչվում է տարբեր բնագավառների, ինչպես օրինակ՝ առողջապահության, գյուղատնտեսության, փոստային կանոնակարգի և եղանակի: Միաժամանակ գոյություն ունեն 35 այլ ծրագրեր, հիմնադրամներ և մարմիններ, որոնք իրենց պարտավորություններն ունեն տարբեր բնագավառներում: Այդ մարմինները և ինքնին ՄԱԿ-ը՝ իր մասնագիտացված ծրագրերով հանդերձ, կազմում են ՄԱԿ-ի համակարգը:

## **10. Ինչպե՞ս է նշանակվում Գլխավոր քարտուղարը: Ո՞րն է նրա դերը:**

Գլխավոր քարտուղարը նշանակվում է 5 տարի ժամկետով, Անվտանգության խորհրդի երաշխավորությամբ:

Հիմնադրման պահից ի վեր ՄԱԿ-ն ունեցել է 7 քարտուղար.

Տրիգվե Լի (Նորվեգիա) 1946-1952

- Դ-ագ Համարշյուղ (Շվեդիա) 1953-1961
- Ու Թանտ (Բիրմա, այժմ՝ Միանմար) 1961-1971
- Կուրտ Վալդհայմ (Ավստրիա) 1972-1981
- Խավիեր Պերես դե Կուելար (Պերու) 1982-1991
- Բուտրոս Բուտրոս-Ղալի (Եգիպտոս) 1992-1996
- Քոֆի Անան (Գանա) 1997-

Թեև սահմանված օրենքներ չկան, վերջին 25 տարիների ընթացքում Գլխավոր քարտուղարի պաշտոնը փոխանցվում է ըստ տարբեր տարածաշրջանների: Օրինակ՝ Ու Թանտին (Բիրմա),

որն Ասիայից էր, փոխարինեց Կուրտ Վալդհայմը (Ավստրիա) Արևմտյան Եվրոպայից: Նրան հաջորդեց Խավիեր Պերես դե Կուելյարը (Պերու) Լատինական Ամերիկայից: Յուրաքանչյուրն աշխատեց կրկնակի ժամկետով: 1992թ. վեցերորդ Գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալին (Եգիպտոս) Աֆրիկայից էր, ծառայեց միայն մեկ ժամկետ, սակայն 1997թ. նրան փոխարինելու եկավ Զոֆի Անանը (Գանա)՝ նույնպես Աֆրիկայից:

Գլխավոր քարտուղարը կարող է Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրել այնպիսի հիմնահարցերի վրա, որոնք, իր կարծիքով, սպառնում են աշխարհի խաղաղությանը: Նա կարող է Գլխավոր ասամբլեայի և ՄԱԿ-ի ցանկացած այլ մարմնի քննարկմանը ներկայացնել տարբեր բնույթի հարցեր: Հաճախ Գլխավոր քարտուղարը հանդես է գալիս որպես անդամ երկրների վեճերը հարթող «դատավոր»: Երբեմն նրա միջամտության կամ բարեհաճության արդյունքում հիմնահարցերը չեն հասնում Անվտանգության խորհուրդ կամ Գլխավոր ասամբլեա, այլ իրենց լուծումն են գտնում՝ չվերածելով բացահայտ հակամարտության:

### **11. Ո՞վ է վարձատրում ՄԱԿ-ի աշխատանքը և որքա՞ն:**

ՄԱԿ-ի անդամ 185 երկրներն իրենք են վճարում այն ամենի համար, ինչ անում է ՄԱԿ-ը: Նա որևէ այլ եկամտի աղբյուր չունի:

ՄԱԿ-ը երկու բյուջե ունի՝ կանոնավոր, որը ֆինանսավորում է Նյու Յորքում գտնվող Քարտուղարության բուն գործունեությունն ու աշխարհով մեկ սփռված տարածաշրջանային գրասենյակների ծախսերը, և խաղաղապահ բյուջե, որը ֆինանսավորում է տարբեր ձեռնարկումներ առավելապես աշխարհի «թեժ կետերում»: Անդամ երկրները երկու բյուջեներում էլ պետք է պարտադիր ներդրումներ կատարեն: Անդամները վճարում են բոլորի կողմից ընդունված գնահատման սանդղակի համաձայն: Այդ սանդղակը սահմանված է երկրի վճարունակության, ազգային եկամտի և բնակչության թվի հիման վրա:

1997թ. ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեն կազմեց տարեկան 1.3 մլրդ. դոլար: Դա մոտավորապես Նյու Յորք քաղաքի տարեկան բյուջեի 4 տոկոսն է: 1996թ. խաղաղապահ բյուջեն կազմել է 1.6 մլրդ. դոլար: Եթե հաշվի առնենք, թե ինչ միջոցներ են հարկավոր պատերազմ մղելու և հետպատերազմյան ավերածությունները վերացնելու համար, ապա խաղաղապահ գործողությունների համար ծախսված գումարն արդարացնում է իրեն:

ՄԱԿ-ի համակարգը նաև տարեկան շուրջ 5.4 մլրդ. դոլար է ծախսում սոցիալ-տնտեսական զարգացման վրա, այլ խոսքով՝ սովյալներին սննդով ապահովելու, երեխաներին մահաբեր հիվանդությունների դեմ պատվաստելու, առատ բերք ստանալու, ոռոգման և բնապահպանության համար: Այդ գումարները հայթայթվում և ծախսվում են ՄԱԿ-ի տարբեր հիմնադրամների և ծրագրերի՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, (UNICEF), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP), ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA), Պարենի համաշխարհային ծրագրի (WFP) անդամ երկրների կողմից կամավոր ներդրումների ճանապարհով: Եթե այդ գումարը բաժանենք երկրագնդի բնակչության վրա, ամեն մի շնչին կհասնի 80 ցենտ: Մինչդեռ 1994թ. աշխարհի կառավարությունների ռազմական ծախսերը կազմել են 778 մլրդ. դոլար, ըստ այդմ մեկ անձին բաժին է ընկնում 134 դոլար:

### **12. Ի՞նչ լեզուներ է կիրառում ՄԱԿ-ը:**

ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներն են անգլերենը, արաբերենը, իսպաներենը, չինարենը, ռուսերենը և ֆրանսերենը: Գործնական լեզուներն են՝ անգլերենն ու ֆրանսերենը:

Պատվիրակը կարող է խոսել ցանկացած պաշտոնական լեզվով, և նրա ասելիքը միաժամանակ թարգմանվում է բոլոր մյուս պաշտոնական լեզուներով: ՄԱԿ-ի փաստաթղթերի մեծ մասը նույնպես հրատարակվում է վեց պաշտոնական լեզուներով: Երբեմն պատվիրակը կարող է որևէ հայտարարություն անել մի ոչ պաշտոնական լեզվով: Այդ դեպքում տվյալ պատվիրակությունը պետք է կամ բանավոր թարգմանություն ապահովի, կամ էլ որևէ մի պաշտոնական լեզվով գրավոր թարգմանություն ներկայացնի:

ՄԱԿ-ի քարտուղարության աշխատողները, որպես աշխատանքային լեզու, օգտագործում են անգլերենը կամ ֆրանսերենը: Այլ կերպ ասած, Քարտուղարության աշխատողը պետք է լավ

իմանա կամ անգլերեն, կամ ֆրանսերեն, կամ էլ երկուսը միասին:

*Փաստեր. Շինություն, որը կառուցվեց սպանդանոցի տեղում*

Թեև 1946թ. Գլխավոր ասամբլեան Լոնդոնում իր առաջին հանդիպման ժամանակ որոշեց ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակը հիմնել Սիացյալ Նահանգներում, Նյու Յորքը հավակնորդ քաղաքների՝ Ֆիլադելֆիայի, Բոստոնի և Սան Ֆրանցիսկոյի շարքում առաջինը չէր: Նույնիսկ երբ ընտրվեց Նյու Յորքը, կոմիտեն ավելի նպատակահարմար գտավ նրա որոշ հյուսիսային տարածքները: Տեղի վերջնական տարբերակի ճակատագիրը վճռեց Ջոն Գ. Ռոքֆելլեր կրտսերի կողմից նվիրաբերված 8.5 մլն. դոլարը, որը և Առաջին ավենյուի գինն էր: Ավելի ուշ Նյու Յորք քաղաքը այլ տարածքներ ևս նվիրաբերեց:

ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակի համար ընտրված տարածքը թեթև արդյունաբերության և երկաթուղային ավտոտնակների ու սպանդանոցների անհրապույր մի թաղամաս էր: Մի կողմից՝ Առաջին ավենյուով աղմուկով անցուղարձ էին անում բեռնատարները, մյուս կողմից՝ Իստ Բիվըր (այժմ վերանվանված FDR փողոց՝ ի հիշատակ Ֆրանկլին Ռուզվելտի) առափնյա փողոցով ընթանում էին ավտոմեքենաները: ՄԱԿ-ի Քարտուղարության երկնասլաց շենքը իսպառ փոխեց այդ վայրի տեսքը:

Սկզբնական նախագծով նախատեսվում էր կառուցել 85 մլն դոլար արժողությամբ 45 հարկանի բարձրահարկ, սակայն Գլխավոր քարտուղար Տրիգվե Լիի ցուցումով արժեքը կրճատվեց 20 մլն դոլարով, հարկերի թիվը դարձավ 39: Ամերիկյան կառավարությունը 65 մլն դոլարի երկարաժամկետ անտոկոս փոխառություն տրամադրեց շինարարական ծախսերը հոգալու համար: Այդ գումարի վերջին մուծումները կատարվել են 1982թ.:

1949թ. հոկտեմբերի 24-ին Գլխավոր քարտուղար Տրիգվե Լին դրեց Կենտրոնական գրասենյակի հիմնաքարը: Տասնինը ամիս անց՝ 1951թ. օգոստոսի 21-ին Քարտուղարության աշխատակիցները սկսեցին տեղափոխվել իրենց նոր աշխատասենյակները:

## **ՄԱԿ-ի ընտանիքը** **Ի՞նչ է անում անդամներից յուրաքանչյուրը**

### **Որո՞նք են ՄԱԿ-ի տարբեր մարմինների հիմնական գործառույթները:**

Կանոնադրությունը ստեղծեց ՄԱԿ-ի վեց հիմնական մարմինները: Ահավասիկ նրանց կառուցվածքն ու գործառույթները:

**Գլխավոր ասամբլեան** ՄԱԿ-ի կենտրոնական մարմինն է, որտեղ յուրաքանչյուր ազգ կարող է ելույթ ունենալ և ունկնդրվել ցանկացած առիթով: Այստեղ ներկայացված են ՄԱԿ-ի բոլոր անդամները: Հարուստ թե աղքատ, մեծ թե փոքր, ամեն մի ազգ միայն մեկ ձայն ունի: Կարևորագույն հարցերը լուծվում են ձայների երկու երրորդի մեծամասնությամբ: Թեպետ ամեն երկիր միայն մեկ ձայն ունի, շատերը ներկայանում են մի քանի հոգուց բաղկացած պատվիրակությամբ: Պատվիրակությունը, որպես կանոն, գլխավորում է դեսպանի կարգավիճակ ունեցող դիվանագետ:

Գլխավոր ասամբլեան կանոնավոր կերպով գումարվում է տարին մեկ անգամ: Այն սկսվում է սեպտեմբերի երրորդ երեքշաբթի և տևում է առնվազն երեք ամիս: Հատուկ նիստերը կարող են նախատեսվել տարվա այլ ժամանակահատվածներում, իսկ արտահերթ հանդիպումները՝ ցանկացած ժամանակ:

Ասամբլեան ամեն տարի նախագահ է ընտրում, որը վարում է ասամբլեայի ամբողջ նստաշրջանը:

Գլխավոր ասամբլեան կարող է քննարկել և մեկնաբանություններ անել ցանկացած նյութի շուրջ (բացառությամբ Անվտանգության խորհրդի իրավասության տակ գտնվող նյութերի): Հաճախ քննարկվում են զինված հակամարտությունների, խաղաղության պահպանման, զինաթափման և այլ հարցեր: Ասամբլեան քննարկումների միջոցով ուղիներ ու հնարավորություններ է որոնում նաև կանանց, երեխաների և երիտասարդության իրավիճակը բարելավելու համար: Քննարկման առարկա են կայուն զարգացման ու մարդու իրավունքների հետ կապված հիմնահարցերը: Ի լրումն՝ Ասամբլեային հաշվետվություն են ներկայացնում Անվտանգության խորհուրդն ու ՄԱԿ-ի մյուս հիմնական մարմինները, ինչպես նաև Գլխավոր քարտուղարը:

Գլխավոր ասամբլեան նոր անդամներ է ընդունում ըստ Անվտանգության խորհրդի հանձնարարականի: Անվտանգության խորհրդի հանձնարարությամբ է նշանակվում նաև Գլխավոր քարտուղարը, որն ինքը՝ ՄԱԿ-ն է: Նա իր մարմինների համար անդամներ է ընտրում, որոշում յուրաքանչյուր անդամ պետության դրամական վճարի չափը ՄԱԿ-ի պահանջների համար և այդ դրամի իրացման ուղիները:

Գլխավոր ասամբլեայի ընդունած որոշումները անդամ պետությունների համար միայն առաջարկություններ են: Մինչդեռ այդ առաջարկությունները մեծ կշիռ ունեն, քանի որ Գլխավոր ասամբլեան ներկայացնում է աշխարհի գրեթե բոլոր երկրների ձայնն ու հասարակական կարծիքը:

**Անվտանգության խորհուրդ:** Անվտանգության խորհուրդը կոչված է լինելու աշխարհի խաղաղության գլխավոր պահպանը: Մինչ Գլխավոր ասամբլեան կարող է քննարկել աշխարհի ցանկացած հարց, Անվտանգության խորհուրդը զբաղվում է միայն խաղաղության և անվտանգության հարցերով: ՄԱԿ-ի բոլոր անդամները համաձայնվել են ընդունել և իրագործել Անվտանգության խորհրդի որոշումները:

Անվտանգության խորհուրդը տասնհինգ անդամ երկիր ունի: Այդ երկրներից հինգը մշտական են: Դրանք են՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Մնացած տասը ոչ մշտական անդամներ են, որոնք ընտրվում են՝ Գլխավոր ասամբլեայի կողմից երկու տարի ժամկետով

ելնելով աշխարհագրական դիրքից:

Ի տարբերություն Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհուրդը կանոնավոր նիստեր չի գումարում: Դրա փոխարեն նա կարող է գումարվել ցանկացած ժամանակ՝ նախապես այդ մասին տեղեկացնելուց հետո: Ցանկացած երկիր՝ ՄԱԿ-ի անդամ լինի, թե ոչ, այդ թվում նաև Գլխավոր քարտուղարը, կարող են Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրել վեճերի կամ խաղաղությանը սպառնացող վտանգի վրա:

Երկրների անգլերեն անվանման այբբենական կարգի համաձայն, որպես նախագահ, անդամները յուրաքանչյուր ամիս հերթափոխում են խորհրդում:

Անվտանգության խորհրդի քվեարկությունը տարբերվում է Գլխավոր ասամբլեայի քվեարկությունից: Կարևոր որոշում ընդունելու համար Խորհրդի առնվազն ինն անդամ պետք է քվեարկի կողմ, սակայն, եթե հինգ մշտական անդամներից մեկը քվեարկում է դեմ, ապա որոշման վրա «վետո» է դրվում, և որոշումը չի ընդունվում:

**Տնտեսական և սոցիալական խորհուրդ:** Տնտեսական և սոցիալական խորհուրդը հաստատվում է կոչվում է ECOSOC և զբաղվում է այնպիսի տնտեսական հարցերով, ինչպիսիք են առևտուրը, փոխադրամիջոցները, արդյունաբերությունը և տնտեսական զարգացումը, սոցիալական խնդիրներից՝ բնակչության, երեխաների, բնակարանների, բնակարաններով ապահովելու, կանանց իրավունքների, ռասայական խտրականության, թմրադեղերի, հանցագործության, սոցիալական բարօրության, երիտասարդության խնդիրների, շրջակա միջավայրի և սննդի հարցերով: Նաև խորհուրդներ է տալիս կրթության և առողջապահության բարելավման, մարդու իրավունքներն ու մարդու ազատություններն ամենուրեք հարգելու և պահպանելու համար: ECOSOC-ի մեջ ընդգրկված են 54 անդամ երկրներ: Բոլորն էլ ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից երեք տարի ժամկետով: Խորհուրդը սովորաբար գումարում է տարին մեկ նիստ, և նրա որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

ECOSOC-ի գործունեությունը բավականին տարաբնույթ է մեկ մարմնի համար: Այդ իսկ պատճառով բազմաթիվ օժանդակ հանձնաժողովներ ունի:

Որոշ հանձնաժողովներ գործող են և ECOSOC-ին խորհուրդներ են տալիս հատուկ հարցերի վերաբերյալ:

Հանձնաժողովները հետևյալն են.

- Մարդու իրավունքների հանձնաժողով
- Թմրադեղերի հանձնաժողով
- Սոցիալական զարգացման հանձնաժողով
- Բնակչության և զարգացման հանձնաժողով
- Կանանց կարգավիճակի հանձնաժողով
- Վիճակագրական հանձնաժողով
- Հանցագործությունների կանխման և քրեական արդարադատության հանձնաժողով
- Կայուն զարգացման հանձնաժողով
- Հանձնաժողով հանուն գիտության և տեխնոլոգիայի զարգացման

Մյուսները տարածաշրջանային հանձնաժողովներ են, որոնք զբաղվում են տարբեր աշխարհագրական վայրերին բնորոշ խնդիրներով: Դրանք են՝

ECA-Աֆրիկայի տնտեսական հանձնաժողով

ECE-Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

ECLAC-Լատինական Ամերիկայի և Կարիբյան երկրների տնտեսական հանձնաժողով

ESCAP-Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հանձնաժողով

ESCWA-Արևմտյան Ասիայի տնտեսական և սոցիալական հանձնաժողով:

ECOSOC-ի գործունեությունը միայն ֆունկցիոնալ և տարածաշրջանային հանձնաժողովներով չի



սահմանափակվում: Նա նաև աշխատում է, այսպես կոչված, մասնագիտացված գործակալությունների և ՄԱԿ-ի ծրագրերի հետ: Հաճախ նրանք միասին են աշխատում հատուկ ծրագրեր իրականացնելիս:

ՄԱԿ-ն ունի 14 մասնագիտացված գործակալություններ: Դրանցից յուրաքանչյուրը մի առանձին կազմակերպություն է՝ իր անդամներով, բյուջեով և կենտրոնական գրասենյակով: Դրանք ուսումնասիրում են գոյություն ունեցող հիմնահարցերը, առաջարկություններ են անում -և օժանդակում զարգացող երկրներին իրենց բնորոշ ոլորտներում: Դրանք են.

ILO-Աշխատանքի միջազգային կազմակերպություն, FAO- ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, UNESCO-ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, WHO-Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, World Bank- Համաշխարհային բանկ, IMF- Միջազգային արժույթային հիմնադրամ, ICAO-Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն, UPU-Համընդհանուր փոստային միություն, ITU-Միջազգային հեռախոսահաղորդակցության միություն, WMO-Օդերևույթաբանական համաշխարհային կազմակերպություն, IMO- Միջազգային ծովային կազմակերպություն, WIPO-Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, IFAD-Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, UNIDO-ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն:

Գոյություն ունեն նաև երկու համանման, բայց առանձին գործակալություններ.

IAEA-Միջազգային ատոմային էներգիայի գործակալություն

WTO-Առևտրի միջազգային կազմակերպություն:

ՄԱԿ-ի ծրագրերն ու մյուս հաստատությունները ստեղծվել են Գլխավոր ասամբլեայի կողմից հատուկ տարածաշրջաններում աշխատելու համար: Նրանք սերտորեն համագործակցում են Տնտեսական և սոցիալական խորհրդի հետ և հիմնականում հաշվետու են Գլխավոր ասամբլեային ու խորհրդին: Այդ ծրագրերն են.

UNICEF-ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ. UNRWA- Մերձավոր Արևելքի և Պաղեստինի փախստականների օգնության աշխատանքների գործակալություն. UNHCR-ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ. WFP- Պարենի համաշխարհային ծրագիր. UNITAR-ՄԱԿ-ի ուսուցման և հետազոտությունների ինստիտուտ. UNCTAD-ՄԱԿ-ի զարգացման և առևտրի համաժողով. UNDP-ՄԱԿ-ի զարգացման ծրագիր. UNFPA-ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ. UNEP-ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր. UNU-ՄԱԿ-ի համալսարան. INSTRAW-Կանանց կատարելագործման միջազգային ուսումնահետազոտական ինստիտուտ. UNCHS-ՄԱԿ-ի մարդկային բնակավայրերի կենտրոն:

**Հոգաբարձուների խորհուրդ:** ՄԱԿ-ի հիմնադրման ժամանակ աշխարհում կային այնպիսի վայրեր, որտեղ մարդիկ ազատ չէին: Նրանցից մի քանիսի վրա տարածվում էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված Մանդատը: Մյուսները անջատվել էին թշնամի պետություններից երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: ՄԱԿ-ի ստեղծվելուց հետո այդ տարածքները ընդգրկվեցին նրա հատուկ պաշտպանության ներքո և կոչվեցին ենթակա տարածքներ: Որպես ՄԱԿ-ի մարմին՝ ստեղծվեց Հոգաբարձուների խորհուրդը, որը վերահսկում էր այդ տարածքներում բնակվող մարդկանց սոցիալական առաջընթացը: Սկզբում այդպիսի տարածքները տասնմեկն էին՝ հիմնականում Աֆրիկայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

Հոգաբարձուների խորհրդի կազմում Անվտանգության խորհրդի մշտական անդամներն են. այսինքն՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Ռուսաստանի Դաշնությունը և Ֆրանսիան: Յուրաքանչյուր անդամ մեկ ձայն ունի, և որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

Հոգաբարձուների խորհուրդը սովորաբար գումարվում էր տարին մեկ անգամ՝ մայիսին կամ

հունիսին: Խորհրդի անդամները ուսումնասիրում էին ենթակա տարածքի համար պատասխանատու ազգի հաշվետվությունը, ճշտում, թե արդյո՞ք իրականում տարածքը գնում է դեպի անկախություն կամ առնվազն փորձում է ինքնորոշվել, քննարկվում էին տարածքից եկած բողոքները, ներկայացուցիչներ ուղարկվում տարածք օգնություն ցույց տալու համար: Վերջին ենթակա տարածքը՝ Պալաուն, որը նախկինում ԱՄՆ իշխանության ներքո էր, ինքնիշխանություն ձեռք բերեց 1994թ. հոկտեմբերին, որից հետո Հոգաբարձուների խորհուրդը, կես դար գործելուց հետո, պաշտոնապես դադարեցրեց իր աշխատանքը: Այն նորից կգումարվի անհրաժեշտության դեպքում:

ՄԱԿ-ը զբաղվում է նաև չինքնակառավարվող տարածքների բնակչությանը: Այդ տարածքները, որոնց երբեմն գաղութ են անվանում, կառավարվում են այլ երկրների կողմից, որոնք որոշումներ են կայացնում նրանց փոխարեն: Քանի որ Հոգաբարձուների խորհուրդը հետևում էր միայն ենթակա տարածքներին, Գլխավոր ասամբլեան 1960թ. հռչակագիր ընդունեց բոլոր գաղութների և ժողովուրդների անկախության գործընթացն արագացնելու համար: Հաջորդ տարում ստեղծվեց ապագաղութացման հատուկ հանձնաժողով: Գաղութները կառավարող երկրները կանոնավոր հաշվետվություններ են ուղարկում Ապագաղութացման հատուկ կոմիտե գաղութում տիրող իրավիճակի մասին: Հռչակագիրն ընդունելուց հետո ապագաղութացվել է մոտավորապես 60 երկիր, և բոլորն էլ ՄԱԿ-ի անդամ են դարձել:

**Միջազգային դատարան:** Միջազգային դատարանը ՄԱԿ-ի իրավական դատավճիռներ կայացնող գլխավոր մարմինն է: Այնտեղ կարող են գործ հարուցել միայն պետությունները: Եթե պետությունը համաձայնվում է, որ գործը վարի դատարանը, ուրեմն պետք է խոստանա ենթարկվել դատավճռին: ՄԱԿ-ի այլ մարմիններ նույնպես առաջնորդվում են դատարանի խորհրդակցական կարծիքով:

Դատարանը օգնել է հարթելու բազմաթիվ վեճեր: 1992թ. լուծել է Սալվադորի և Հոնդուրասի միջև ցամաքային և ծովային սահմանի խնդիրը: Լուծել է նաև Դանիայի և Նորվեգիայի միջև ցամաքային և ձկնորսական տարածաշրջաններ բաժանող ծովային սահմանի հարցը:

Դատարանի վերջերս կայացրած մի այլ որոշում առնչվում է նախկին Հարավսլավիայի երկրներում ցեղասպանության վերաբերյալ ՄԱԿ-ի ընդունած կոնվենցիային (1993):

Դատարանը գտնվում է Հաագայում (Նիդեռլանդներ) և անընդհատ նիստեր է հրավիրում: Ունի 15 դատավոր, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից:

Միևնույն երկրից երկու դատավոր լինել չի կարող: Որոշում կայացնելու համար անհրաժեշտ է առնվազն ինը դատավորի համաձայնություն:

**Քարտուղարությունը:** ՄԱԿ-ի բոլոր աշխատակիցները Քարտուղարության անդամ են: ՄԱԿ-ը գլխավորում է Գլխավոր քարտուղարը: Նրան օժանդակում է միջազգային քաղաքացիական ծառայողներից բաղկացած աշխատակազմը, որը կատարում է կազմակերպության առօրյա աշխատանքը: Քարտուղարությունը պատասխանատու է ՄԱԿ-ի բոլոր այլ մարմինների աշխատանքի համար և ղեկավարում է նրանց ստանձնած դրված ծրագրերն ու քաղաքականությունը:

Մարտուղարության անդամները հավաքում և նախնական տեղեկություն են պատրաստում տարբեր հարցերի վերաբերյալ, որպեսզի կառավարությունների պատվիրակները կարողանան ուսումնասիրել փաստերը և առաջարկություններ անել: Քարտուղարությունն այնուհետև օգնում է ի կատար ածել ՄԱԿ-ի որոշումները:

Այլ կերպ ասած, ՄԱԿ-ը՝ որպես համակարգ, կազմված լինելով Նյու Յորքում գտնվող Քարտուղարությունից և իր տարածաշրջանային գրասենյակներից, ինչպես նաև մասնագիտացված գործակալություններից և ծրագրերից, ամբողջ աշխարհում ունի 50 հազարանոց աշխատակազմ: Մոտավորապես 4800-ը աշխատում են Նյու Յորքի Կենտրոնական գրասենյակում: Նրանց մեջ կան տնտեսագետներ, իրավաբաններ, խմբագիրներ, գրադարանավարներ, թարգմանիչներ և «ետնաբեմում» աշխատող բազմաթիվ այլ մասնագետներ: Բոլոր տարածաշրջաններից ներկայացուցիչներ ապահովելու համար ՄԱԿ-ը

աշխատանքի է վերցնում հնարավորին չափ տարբեր երկրների որակավորված մասնագետներ: Որպես կանոն, աշխատանքի ընդունվելու համար դիմորդները քննություն են հանձնում մրցակցության հիմունքներով: ՄԱԿ-ի անձնակազմի գրասենյակներն ունեն բոլոր նպատակահարմար թեկնածուների ցանկերը, և ցանկացած որակավորված մասնագետ կարող է աշխատել Քարտուղարության համար:

### **Փաստեր**

#### **Միացյալ ազգերի կազմակերպության դրոշը**

ՄԱԿ-ի դրոշը երկնագույն է, իսկ կենտրոնում սպիտակ խորհրդանիշն է, որը պատկերում է աշխարհի քարտեզը՝ շրջապատված ձիթենու ճյուղերով՝ խորհրդանշող խաղաղությունը: ՄԱԿ-ի դրոշը պատրաստելիս պետք է այնպես անել, որ խորհրդանիշը գտնվի դրոշի ուղիղ կենտրոնում, և նրա տրամագիծը լինի լայնության կեսի չափ: Դրոշի նախագիծն ընդունվել է Գլխավոր Ասամբլեայի կողմից 1947թ. հոկտեմբերի 20-ին:

## ՄԱԿ-ի գործունեությունը հանուն խաղաղության և առաջընթացի

**1. ՄԱԿ-ը ստեղծվել է խաղաղություն պահպանելու նպատակով: Ինչպե՞ս է դա իրականացվում:**  
ՄԱԿ-ը ներկայացուցչական մի համաժողով է, որտեղ պետությունները կարող են բարձրացնել և քննարկել ամենախորթին հարցեր, ներառյալ պատերազմի ու խաղաղության հիմնահարցը: Երբ կառավարությունների առաջնորդները հանդիպում և զրուցում են դեմ առ դեմ, ստացվում է երկխոսություն: Հաճախ դա հանգեցնում է վեճերի լուծման խաղաղ ճանապարհով: Գլխավոր քարտուղարն անձամբ կամ որևէ ներկայացուցչի միջոցով, նույնպես կարող է մասնակցել նման երկխոսությանը:

Այդպիսի ջանքերի ձախողման դեպքում ՄԱԿ-ն իր տրամադրության տակ ունի այլ միջոցներ: Գլխավոր ասամբլեան կարող է կոչ անել շահագրգիռ պետություններին թուլացնել լարումը կամ դատապարտել բռնության գործողությունները: Երբ բազմաթիվ երկրներ համակարծիք են, կառավարությունները ստիպված են ենթարկվել: Եթե դա էլ չի ազդում պատերազմող երկրներին վրա միջամտում է Անվտանգության խորհուրդը: Նրա որոշումները, լինեն զինադադարի կոչ թե տնտեսական և ռազմական պատժամիջոցներ, պարտադիր բնույթ ունեն: Չինադադարի հասնելուց հետո Անվտանգության խորհուրդն սկսում է խաղաղապահ գործունեություն՝ վերահսկելով զինադադարի իրականացումը և վեճերի խաղաղ ճանապարհով լուծման գործընթացը:

**2. ՄԱԿ-ը որևէ պատերազմ կասեցրե՞լ է:**

ՄԱԿ-ն օգնել է կանխել շատ ընդհարումներ, որպեսզի չվերածվեն իրական պատերազմների: Բանակցություններ է վարել հակամարտությունների խաղաղ լուծման համար: Շատ դեպքերում ՄԱԿ-ը մեխանիզմ է առաջարկել ծայրահեղ իրավիճակներից դուրս գալու համար: Այդպիսի իրավիճակներից են **Բեռլինյան ճգնաժամը (1948-1949)**, **Կուբայի հրթիռային ճգնաժամը (1962)** և **Միջին Արևելքի ճգնաժամը (1973)**: Նշված դեպքերից յուրաքանչյուրում ՄԱԿ-ի միջամտությունն օգնել է կանխելու գերիշխանությունների միջև հասունացող պատերազմը:

ՄԱԿ-ը մեծ դեր է խաղացել նաև Կոնգոյի (1964), Իրանի և Իրաքի (1988), Աֆղանստանի (1989) պատերազմները դադարեցնելու գործընթացում: Վերջին տարիներին ՄԱԿ-ի Անցման օժանդակության խումբը (UNTAC) վերահսկեց Նամիբիայի առաջին ազատ և արդար ընտրությունները, որոնք հանգեցրին անկախության: Կամբոջայում ՄԱԿ-ի Անցումային ղեկավարությունը (UNTAC) օժանդակեց և վերահսկեց զինադադարն ու օտար ուժերի արտաքսումը, վերահսկեց և կառավարեց տարբեր կառավարական գրասենյակներ, կազմակերպեց ազատ ու արդար ընտրություններ:

**Նախկին Հարավսլավիայում** Միավորված ազգերի պաշտպանության ուժերը (UNPROFOR) աշխատում էին պաշտպանել քաղաքացիներին ապառազմականացված տարածաշրջանում և աջակցել մարդասիրական օգնության բաշխմանը:

**3. Ի՞նչ է տեղի ունենում, երբ մի պետություն խախտում է ՄԱԿ-ի որոշումը: Կարո՞ղ է արդյոք ՄԱԿ-ը երբևէ ուժ գործադրել իր որոշումներն իրականացնելու համար:**

Եթե Անվտանգության խորհրդի որոշումներն ի կատար չեն ածվում, ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ: Նախ գործն ուղարկվում է Միջազգային դատարան՝ նրա կարծիքն իմանալու: Ապա, այն դեպքում, երբ տվյալ պետությունը սպառնում է խախտել խաղաղությունը կամ բռնության գործողության է դիմում, կարող են կիրառվել տնտեսական կամ այլ պատժամիջոցներ: Որոշ դեպքերում Խորհուրդը կարող է հովանավորել ուժի գործադրումը: Սակայն դա ծայրահեղ միջոց է և կիրառվում է միայն այն բանից հետո, երբ վեճի խաղաղ կարգավորման բոլոր հնարավորությունները սպառված են:

1966թ. տնտեսական պատժամիջոցներ կիրառվել են Ռոդեզիայում (այժմ՝ Չինբաբվե) սպիտակամորթ փոքրամասնության ռեժիմի դեմ: 1977թ. գեների բռնագրավում է կիրառվել Հարավային Աֆրիկայում իշխող սպիտակամորթ փոքրամասնության ռեժիմի ռասայական խտրականության՝ այսպես կոչված, ապարտեիդի քաղաքականության դեմ: Վերջին տարիներին պատժամիջոցներ են կիրառվել Լիբիայում, Սոմալիում, Հարավսլավիայում, Իրաքում, Հաիթիում, Ռուանդայում, Լիբերիայում և Անգոլայի որոշ հատվածներում:

#### **4. Արդյոք ՄԱԿ-ը բանակ ունի՞:**

Ո՛չ, ՄԱԿ-ը ո՛չ մշտական միջազգային ոստիկանություն ունի, ո՛չ էլ ռազմական ուժեր: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության, նրա անդամ-երկրները պարտավոր են Անվտանգության խորհրդին տրամադրել զինված ուժեր, օգնություն և սարքավորումներ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար:

#### **5. Ինչպե՞ս կարող է ՄԱԿ-ը պատերազմող կողմերի միջև խաղաղություն պահպանել առանց սեփական բանակի:**

Ոստիկանությունը և ռազմական ուժերը, որոնց ՄԱԿ-ը օգտագործում է **Խաղաղապահ գործողությունների** համար, կամովին նրան են տրամադրում անդամ պետությունները: Խաղաղապահներին անհրաժեշտ ծանր հրետանին ու զենքը նույնպես տրամադրում են անդամ երկրները: ՄԱԿ-ի քաղաքացիական անձնակազմը ևս մնան գործողություններում որոշիչ դեր է խաղում:

#### **6. Ի՞նչ է խաղաղապահ գործողությունը:**

Ի սկզբանե խաղաղության պահպանումը սահմանվել է որպես ՄԱԿ-ի գլխավորությամբ բազմազգ ուժերի գործողություն թշնամի պետությունների միջև հակամարտությունը վերացնելու և հսկելու նպատակով:

Խաղաղապահ գործողությունները կատարում են երրորդ կողմի դեր զինադադարի հասնելու և հակամարտող կողմերի միջև ընդհարումը **մեղմացնող օղակ** ստեղծելու համար: Դա հեշտացում է հակամարտության խաղաղ կարգավորման համար անհրաժեշտ դիվանագիտական ուղիներ փնտրելու գործը: Մինչ խաղաղապահները տարածքում խաղաղություն են ապահովում, ՄԱԿ-ի միջնորդները հանդիպում են հակամարտության մեջ մտած երկրների կամ վիճաբանող կողմերի ղեկավարների հետ և փորձում հարցը լուծել բանակցությունների ճանապարհով:

Գոյություն ունի խաղաղապահ գործողությունների երկու տեսակ՝ **դիտորդի առաքելություն և խաղաղապահ ուժեր:**

Դիտորդները զինված չեն: ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի զինվորները զինված են թեթև զենքով, որը կարող են գործի դնել միայն ինքնապաշտպանության նպատակով: ՄԱԿ-ի

խաղաղապահներին կարելի է հեշտությամբ ճանաչել ՄԱԿ-ի տարբերանշաններով և երկնագույն բերետներով, որոնք նրանք կրում են ծառայության ժամանակ: Երկնագույն սաղավարտը, որն արդեն ՄԱԿ-ի խաղաղապահների խորհրդանիշն է դարձել, զինվորներն ունենում են բոլոր գործողությունների ժամանակ, իսկ վտանգի դեպքում կրում են: Խաղաղապահ զինվորները հագնում են իրենց ազգային համազգեստը: Պետությունները, որոնց գորքերը կամովին հանդես են գալիս ՄԱԿ-ի դրոշի տակ, պահպանում են իրենց լիիրավ իշխանությունը դրանց վրա:

Մովորաբար խաղաղապահ գործողությունները հաստատվում են Անվտանգության խորհրդի կողմից, որոնք ղեկավարում է Գլխավոր քարտուղարը: Անհրաժեշտ է ինչպես հյուրընկալող կառավարության, այնպես էլ այլ ներգրավված կողմերի համաձայնությունը: Չինվորներն ու քաղաքացիական ծառայողները պետք է լինեն բացարձակ չեզոք և չպետք է միջամտեն իրենց հյուրընկալող պետության ներքին գործերին:

Խաղաղության պահպանումը սկսվում է ճզնաժամը ծագելուն պես, սակայն խաղաղարարությունը սկսվում է դրանից շատ ավելի վաղ: ՄԱԿ-ը տարբեր եղանակներով կարող է կանխել նոր վեճերի բորբոքումը կամ եղած վեճերի պատերազմի վերաճելը: Գործընթացի ժամանակ կարող են օգտագործվել անձնական կապեր, Գլխավոր քարտուղարի «բարեկամներ»

կամ փաստահավաք առաքելություններ: Այս միջոցները հայտնի են որպես կանխող դիվանագիտություն:

### **7. Ինչու՞ ՄԱԿ-ն այդքան շատ խաղաղապահ գործողությունների դիմում:**

Խաղաղապահ գործողությունները սկսվում են ի պատասխան լուրջ ռազմական կամ մարդասիրական ճգնաժամերի: Անցյալում խաղաղապահները հիմնականում ներգրավված էին մարտնչող ազգերի միջև խաղաղություն պահպանելու գործում: Սակայն հիմա շատ ազգեր իրենք իրենց մեջ են պատերազմում: Քաղաքացիական կռիվների և էթնիկական հակամարտությունների պատճառով որոշ կառավարություններ չեն կարողանում իշխանությունը պահել սեփական երկրում, որը և պատճառ է դառնում մարդկային մեծ զրկանքների: Նման դեպքերում ՄԱԿ-ին հաճախ խնդրում են՝ մի կողմից խաղաղության բանակցություններ վարել, մյուս կողմից՝ շտապ օգնություն ցուցաբերել հակամարտությունից տուժածներին: Աշխատելով ծանր պայմաններում՝ ՄԱԿ-ը համատեղում է մարդասիրական օգնությունը ճգնաժամի կարգավորման ջանքերի հետ: Օրինակ՝ նախկին Հարավսլավիայի տարածքներում տարբեր խմբավորումներ դաժան մարտեր էին մղում՝ իրենց ետևից թողնելով հազարավոր զոհեր, վիրավորներ և անօթևան մարդիկ: Ի պատասխան՝ 1992թ. ՄԱԿ-ն ստեղծեց Պաշտպանության ուժեր: Խաղաղապահ գործողության օրինակ ծառայելով՝ նա օգնում էր խաղաղ պայմաններ հաստատել և միաժամանակ մարդասիրական օգնություն էր բաշխում Բոսնիայի և Հերցեգովինայի ժողովրդին: Մոմալիում նույնպես՝ քաղաքացիական պատերազմներից բզկտված մի այլ երկրում, ՄԱԿ-ի գործողությունները միաժամանակ ուղղված էին հրադադարի վերահսկմանը և շտապ օգնության միջոցների մատակարարմանը:

### **8. Արդյո՞ք Իրաք-Քուվեյթյան «Անապատային հողմ» գործողությունը խաղաղապահ էր:**

Ոչ, դա ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություն չի համարվում, թեև լիազորված էր Անվտանգության խորհրդի կողմից: «Անապատային հողմ» գործողությունն իրականացվել էր պետությունների մի խմբավորման կողմից՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Դա հետևեց Անվտանգության խորհրդի 1990թ. նոյեմբերի որոշմանը, ըստ որի, անդամ երկրները լիազորվել էին ձեռնարկել «բոլոր հնարավոր միջոցները» Իրաքին Քուվեյթից արտաքսելու համար:

1950թ. նման իրավիճակ ստեղծվեց Կորեայում: Երբ այդ տարածաշրջանում պատերազմ բռնկվեց, Անվտանգության խորհուրդը լիազորեց անդամ երկրներին «այնպիսի օժանդակություն ցուցաբերել Կորեայի Հանրապետությանը, որ դրանով հնարավոր լինի ետ մղել զինված գրոհը» և ասաց, որ իրենց օժանդակությունն ու ուժերը ներդնող պետությունները «պետք է միավորվեն ԱՄՆ հրամանատարության ներքո»:

Անվտանգության խորհուրդը նույնպես թույլատրեց անդամ երկրներին օգտագործել «բոլոր անհրաժեշտ միջոցները» կասեցնելու համար ռազմական և մարդասիրական ճգնաժամը Մոմալիում (1992), Ռուանդայում (1994) և Հաիթիում (1994): Յուրաքանչյուր դեպքում անդամ երկրները միջազգային ջանքերն ուղղում էին խաղաղության հասնելուն և վտանգի մեջ գտնվող քաղաքացիներին պաշտպանելուն: Այդ ջանքերը շարունակվում են ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելության շրջանակներում:

### **9. Ուրիշ է՞լ ինչ է անում ՄԱԿ-ը խաղաղության համար:**

ՄԱԿ-ի աշխատանքը՝ հանուն խաղաղության, չի սահմանափակվում խաղաղապահ առաքելության բարեհաջող ավարտով: Հակամարտությունը դադարեցնելուց հետո ՄԱԿ-ն օգնում է տեղահանվածներին և փախստականներին՝ վերադառնալու իրենց տները: ՄԱԿ-ը վնասագերծում է ականները, վերականգնում ճանապարհներն ու կամուրջները, տնտեսական ու տեխնիկական օգնություն հատկացնում տնտեսությունը վերականգնելու համար: Նա վերահսկում է նաև ընտրությունները և մոտիկից հետևում, թե ինչպես են երկրում պաշտպանվում քաղաքացիների իրավունքները: Այդ գործընթացը, որը հայտնի է նաև **խաղաղության վերականգնում** անունով, ավելի քան 60 երկրների օգնել է հիմնել ժողովրդավարական հաստատություններ:

ՄԱԿ-ը նաև պայքարում է **զինաթափման** համար՝ խրախուսելով զինված ուժերի կրճատումը: Որոշ խաղաղասեր գործողությունների ժամանակ նույնիսկ վնասագերծվել և ոչնչացվել են զենքերը: Ջանքերն ավարտվեցին նրանով, որ մարդիկ հասկացան զենքը վերահսկելու համաձայնագրի առավելությունը: Այդ ջանքերի արդյունքում զենքի վերահսկման վերաբերյալ շատ պայմանագրեր կնքվեցին: Օրինակ, **Անտարկտիկական միջազգային դաշնագիրը (1959)** արգելում է Անտարկտիկայի տարածաշրջանում զենք փորձարկել և ռազմականներ կառուցել: **Կենսաբանական և թունավոր զենքի վերաբերյալ կոնվենցիան (1972)** առաջարկում է ոչնչացնել այդօրինակ զենքը: **Քիմիական զենքի դաշնագիրը (1993)** արգելում է քիմիական զենքի արտադրությունը, օգտագործումն ու տարածումը: **Փորձարկումների բազմակողմանի արգելքի միջազգային պայմանագիրը (1996)** արգելում է պետություններին որևէ միջուկային փորձարկում կամ պայթեցում կատարել:

#### **10. ՄԱԿ-ի նպատակներից մեկը սոցիալական և տնտեսական զարգացումն է: Ի՞նչ է դա նշանակում:**

Գոյություն ունեն բազմաթիվ աղքատ պետություններ, որոնք սեփական ուժերով անկարող են լիովին սատար կանգնել իրենց ժողովրդին և բարձրացնել նրա կենսամակարդակն՝ առանց դրսից ստացվող օգնության: ՄԱԿ-ը մի համաշխարհային արշավ է գլխավորում, որպեսզի տնտեսական և սոցիալական զարգացման միջոցով նվազեցնի աղքատությունը, վերացնի սովը, բարելավի մարդկանց առողջությունն ու կրթությունը: Փաստորեն, ՄԱԿ-ն իր միջոցների 80%-ը ծախսում է հենց այդ նպատակներով: Ահա մի քանի օրինակ.

ՄԱԿ-ը՝ որպես համակարգ, տարեկան 30 մլրդ. դոլար է ծախսում զարգացող երկրներում տնտեսական և սոցիալական օգնության ծրագրերի իրականացմանն աջակցելու համար:

Պարեն, ապաստան և բժշկական շտապ օգնություն է հայթայթում միլիոնավոր փախստականների և տեղահանվածների համար:

Պատվաստում է երեխաներին և տարեկան ավելի քան 3 մլն երեխա փրկում վաղաժամ մահից: Համընդհանուր պայքար է մղում ՉԻԱՀ-ի դեմ:

Օգնում է երկրներին նոր ուղիներ գտնել թմրամիջոցների պաշարները և պահանջարկը վերահսկելու համար:

#### **11. Ի՞նչ է անում ՄԱԿ-ը մեր շրջակա միջավայրի պաշտպանության համար: Արդյո՞ք նա դրանով նույնպես մտահոգված է:**

ՄԱԿ-ը մեր շրջակա միջավայրի պաշտպանության գործում մեծ դեր է խաղում: Հետազոտական աշխատանքներ է տանում, հսկում շրջակա միջավայրի վիճակը և երկրների կառավարություններին խորհուրդներ տալիս բնական պաշարները պահպանելու ուղիների վերաբերյալ: Ամենակարևորը՝ հավաքում է տարբեր երկրների կառավարությունների ներկայացուցիչներին միջազգային օրենքներ ընդունելու համար, որոնք որոշակի ազգային սահմաններ չճանաչող բնապահպանության խնդիրներ են լուծում: Մի քանի օրինակ.

**Անհետացման ենթակա տեսակների միջազգային առևտրի կոնվենցիա (1973)**, օգնում է հսկել բնության արտադրանքի առևտուրը:

**Մոնրեալի փաստաթուղթ (1987)**, պարտավորեցնում է պետություններին նվազեցնել այն քիմիական նյութերի արտանետումները, որոնք վտանգավոր են օգոնային շերտի համար:

**Վտանգավոր թափոնների վերաբերյալ Բազելի կոնվենցիա (1989)**, արգելում է թունավոր թափոնների բեռնաթափումն ու վաճառքը:

1992թ. ՄԱԿ-ն աշխարհի ղեկավարների հանդիպում կազմակերպեց Ռիո դը Ժանեյրոյում, այսպես կոչված, **Երկրագնդի զագաթաժողովում** բնապահպանության հարցեր քննարկելու նպատակով: Աշխարհի ավելի քան 100 երկրների ղեկավարներ ընդունեցին Օրակարգ 21-ը, որտեղ հանգամանորեն խոսվում է շրջակա միջավայրի պաշտպանության և համաչափ զարգացման բազմակողմանի գործողությունների ծրագրի մասին:

**12. ՄԱԿ-ը շատ է խոսում մարդու իրավունքների մասին: Ինչու:՞**

Մարդու իրավունքներն այն իրավունքներն են, որոնք անհրաժեշտ են մարդուն իրեն մարդ զգալու համար: Դրանց թվում են կյանքի և ազատության իրավունքը, օրենքի առաջ հավասարության իրավունքը, ազատ շարժվելու իրավունքը, տանջանքից ազատ լինելու իրավունքը, համոզմունքների և կրոնի ազատությունը, աշխատանքի ու կրթության իրավունքը: Առանց մարդու իրավունքների՝ մենք չենք կարող լիիրավ գարգանալ և գործադրել մեր մարդկային հատկանիշները, մեր մտավոր, հոգևոր կարողություններն ու տաղանդը:

1948թ. ընդունելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ ՄԱԿ-ը բոլոր ազգերի համար հաստատեց մարդու իրավունքների ընդհանուր չափանիշ: Այս հռչակագրով պետությունները պարտավորվեցին հավաստիացնել, որ բոլոր մարդիկ՝ հարուստ թե աղքատ, ուժեղ թե թույլ, կին թե տղամարդ, անկախ ռասայից և կրոնից, պետք է հավասար վերաբերմունքի արժանանան:

ՄԱԿ-ը շատ այլ միջազգային դաշնագրեր է ընդունել մարդու իրավունքների վերաբերյալ: Դրանով նա իրավաբանորեն պարտավորեցրել է պետություններին երաշխավորել իրենց քաղաքացիների սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավունքները:

Այդ դաշնագրերից ամենակարևորների թվում են երկու միջազգային պարտավորագրեր, մեկը՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, իսկ մյուսը՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ: Այդ դաշնագրերը, երկու նախնական պայմանագրերի հետ մեկտեղ, կազմում են **Մարդու իրավունքների միջազգային օրինագիծը**: ՄԱԿ-ը բազմաթիվ դաշնագրեր է կնքել կանանց, երեխաների, հաշմանդամների, փոքրամասնությունների, բնիկների և այլ կարիքավոր խմբերի իրավունքների վերաբերյալ: Այդ դաշնագրերից է **Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան**, որ արդեն ընդունվել է ավելի քան 185 երկրների կողմից:

**13. Թեև մարդու իրավունքները պաշտպանող օրենքներ կան, առկա են նաև խախտումներ: Ինչ՞ է անում ՄԱԿ-ը այդ դեպքերում:**

ՄԱԿ-ը օրենքի նկատմամբ հարգանքը սերմանում է տարբեր եղանակներով: Նա պայմանագրային մարմիններ է ստեղծել, որոնք վերահսկում են պետությունների կողմից հաստատված մարդու իրավունքների արձանագրությունները: ՄԱԿ-ը հատուկ աշխատանքային խմբեր ունի, որոնք ուսումնասիրում են առանձին պետությունների մարդու իրավունքների վերաբերյալ հաշվետվությունները: Նա նույնիսկ կարող է հատուկ ներկայացուցիչներ ուղարկել առանձին մի երկիր՝ ուսումնասիրելու մարդու իրավունքների խախտման մասին ստացված զեկույցը: Որոշ երկրներում ՄԱԿ-ը նույնիսկ օգնել է հատուկ հանձնաժողովներ ստեղծել, որպեսզի նրանք լսեն կառավարության կողմից մարդու իրավունքների խախտման մասին քաղաքացիների բողոքները: ՄԱԿ-ը նաև միջազգային համաժողովներ է կազմակերպում մարդու իրավունքները քննարկելու համար և կառավարություններին առաջարկում է զբաղվել մարդու իրավունքների հարցերով:

**14. Ուրիշ ինչ՞ միջազգային օրենքի ստեղծմանն է աջակցել ՄԱԿ-ը:**

Քանի որ ժամանակակից փոխադրամիջոցներն ու կապը մոտեցնում են երկրներին, նրանց համագործակցության համար ավելի շատ միջազգային օրենքներ են հարկավոր: Իրականում ՄԱԿ-ի անդամ երկրներում անցած 50 տարվա ընթացքում ավելի շատ միջազգային օրենքներ են ընդունվել՝ 350-ից ավելի, քան արձանագրված է մարդկության մնացած պատմության ընթացքում: Ծովերին իջիսելու օրենքներից մինչև թմրադեղերի վերահսկումը, ավիատղիների անվտանգությունն ապահովելուց մինչև փոստի առաքումը, տիեզերքից մինչև շրջակա միջավայրի օրենքը, որոնք հիմք են ստեղծել միջազգային համագործակցության համար:

**15. Լավ, ՄԱԿ-ն աշխատում է հանուն խաղաղության և առաջընթացի, սակայն աշխարհում այսօր խաղաղությունն այնքան սուղ է: Մեր ինչի՞ն է պետք մի կազմակերպություն, որն ի վիճակի չէ իր սեփական որոշումներն իրականացնել:**

Աշխարհում վերջին 50 տարիների ընթացքում մոտավորապես 150 պատերազմ է եղել, սակայն,



շնորհիվ ՄԱԿ-ի, դրանք չեն վերածվել ավերիչ համաշխարհային պատերազմների: Շատ մարդիկ զգում են, որ ավելի լավ կլիներ, եթե ՄԱԿ-ը առավել հզոր լիներ, ավելի շատ կանխեր փոքր պատերազմները և իր որոշումները լիովին իրականացներ: Սակայն ՄԱԿ-ի գործողությունների ազդեցիկ լինելը կախված է անդամ պետությունների քաղաքական կամքից, նրանց՝ իրենց իսկ ընդունած որոշումները հարգելու պատրաստակամությունից: Բացի այդ, այդպիսի գործողությունները թանկ են: Ֆինանսների պակասը հաճախ թույլ չի տալիս ՄԱԿ-ին ավելի ազդեցիկ դեր խաղալ: ՄԱԿ-ի հզորությունը անգամ շատ ծանր դեպքերում չնահանջելու կամքի արդյունք է:

Եթե պատերազմող պետությունները քաղաքական կամք չունեն դադարեցնելու ռազմական գործողությունները, ՄԱԿ-ը երբեմն ստիպված է ետ քաշել իր խաղաղապահ զորքերը: Սակայն ՄԱԿ-ը շարունակում է գործել դիվանագիտության և բանակցությունների միջոցով՝ անընդհատ դիմելով ներգրավված կողմերին: Երբ ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվում, խաղաղապահները կարող են վերադառնալ:

Աշխարհը դեռ երկար ուղի ունի անցնելու, մինչև կարողանա յուրաքանչյուրի համար խաղաղություն և արդարություն ապահովել: Պատերազմները, աղքատությունը և մարդու իրավունքների խախտումները դեռ լայն տարածում ունեն: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ը պետք է շարունակի գործել: Նրա աշխատանքը դեռևս ավարտված չէ: Եթե ՄԱԿ-ը գոյություն չունենար, աշխարհի պետությունները պետք է մի այլ կազմակերպություն ստեղծեին, միգուցե այլ անվամբ, որը կաներ ճիշտ այն, ինչ անում է ՄԱԿ-ը:

## Հաճախակի տրվող հարցեր

### 1. Ով՞ կարող է ՄԱԿ-ի անդամ լինել:

ՄԱԿ-ի անդամ կարող են լինել միայն անկախ, միջազգային ճանաչում ունեցող երկրները: Խարտիայի համաձայն, Միացյալ ազգերի կազմակերպությունը բաց է բոլոր խաղաղասեր պետությունների առաջ, որոնք ընդունում են իրենց պարտականությունները և ի վիճակի են կանոնվին կատարել դրանք: Նոր պետությունները ՄԱԿ-ին անդամագրվում են Գլխավոր ասամբլեայի որոշմամբ, որը կայացվում է Անվտանգության խորհրդի հանձնարարությամբ:

### 2. Ինչ՞ է «վետո»-ն:

ՄԱԿ-ի հիմնադրման գործում գլխավոր դեր են խաղացել հինգ խոշոր պետություններ, որոնք նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը շահած հզոր պետություններ են: ՄԱԿ-ի Խարտիայի նախագծողներն այն կարծիքին էին, որ այդ հինգ հիմնական պետությունները՝ ԱՄՆ-ը, Միացյալ քաղաքացիությունը, Չինաստանը, Ռուսաստանի Դաշնությունը (նախկին ԽՍՀՄ) և Ֆրանսիան, կշարունակեն կարևոր դեր խաղալ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործում: Խաղաղության լավագույն երաշխիքը հինգ պետությունների համատեղ փոխհամաձայնեցված աշխատանքն է հատկապես պատերազմի և խաղաղության հարցերում: Այսպիսով համաձայնության եկան, որ եթե «մեծ հնգյակից» որևէ մեկը «դեմ» է քվեարկել ընթացակարգի մեջ չմտնող որևէ հարցի վերաբերյալ, Անվտանգության խորհուրդը որոշում ընդունել չի կարող: Հիմնական անդամներին տրված այս առավելությունը կոչվում է «վետոյի իրավունք»:

### 3. Ընթացակարգային խնդիրները, ինչպիսիք են օրակարգի ընդունումը, անդամ երկրներին հրավերը ուղարկելը խորհրդի քննարկումներին մասնակցելու համար, ընթացակարգի կանոնների ընդունումը, կատարվում են Անվտանգության խորհրդի 15 անդամից առնվազն իննի համաձայնությամբ: Այդ դեպքում հիմնական անդամները չեն կարող օգտվել վետոյի իրավունքից:

### 4. Արդար՞ է արդյոք, որ միայն հինգ գլխավոր պետություններն ունեն վետոյի իրավունք:

Վերջին տարիներին շատ երկրներ առաջարկել են վերափոխել և ընդարձակել Անվտանգության խորհուրդը: Այդուհանդերձ դեռևս որևէ համաձայնության չեն եկել: Որոշ անդամ երկրներ դեմ են վետոյի իրավունքի վերացման գաղափարին: Մյուսները նախընտրում են սահմանափակել այդ իրավունքը աշխարհի խաղաղությանը սպառնացող որոշ իրադրություններում: Որևէ փոփոխություն կատարելուց առաջ հարկավոր է վերափոխել ՄԱԿ-ի Խարտիան: 1994թ. հունվարից սկսած Գլխավոր ասամբլեայի կողմից ստեղծված մի աշխատանքային խումբ ընդունում է Խորհրդի անդամության ընդարձակման առաջարկներ: Որոշ երկրներ առաջարկել են մեկական նոր հիմնական անդամ երկիր ընտրել Աֆրիկայից, Ասիայից և Հարավային Աֆրիկայից տնտեսական և քաղաքական իրականությունը ճշմարիտ արտացոլելու նպատակով: Սակայն առ այսօր այդ առաջարկությունների վերաբերյալ համաձայնություն չկա:

### 5. Ինչ՞ բան է Միացյալ Ազգերի Կազմակերպության օրը:

Պարզ ասած, դա ՄԱԿ-ի ծննդյան օրն է: 1945թ. հոկտեմբերի 24-ին, երբ սկզբնական անդամների մեծամասնությունը ընդունեց ՄԱԿ-ի Խարտիան, ստեղծվեց ՄԱԿ-ը: Այսպիսով, ամբողջ աշխարհում հոկտեմբերի 24-ին տոնվում է Միավորված ազգերի կազմակերպության օր:

### 6. Ուրիշ ինչ՞ կարևոր տոնակատարություններ է նշում ՄԱԿ-ը:

Խաղաղության միջազգային օրը նշվում է ամեն տարվա սեպտեմբերի երրորդ երեքշաբթի օրը:

Այդ տոնակատարությունը համընկնում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կանոնավոր նստաշրջանի բացման հետ:

Այլ նշանակալի արարողություններն են.

**Կանանց միջազգային օրը** (Մարտի 8-ը)

**Շրջակա միջավայրի համաշխարհային օրը** (5 հունիսի)

**Աղքատության վերացման միջազգային օրը** (17 հոկտեմբերի)

**ՁԻԱՀ-ի համաշխարհային օրը (1 դեկտեմբերի)**

**Մարդու իրավունքների օրը** (10 դեկտեմբերի)

**ՄԱԿ-ը պաշտոնական երգ ունի՞:**

ՄԱԿ-ը պաշտոնական օրհներգ չունի: Գլխավոր ասամբլեան գտնում է, որ պաշտոնական երգի կարիք կա և իրեն է վերապահում նրա ընտրության և ընդունելու իրավունքը: Մինչև հիմա որևէ որոշում չի ընդունվել:

1970թ. մատարո Պաբլո Կազալսը (Իսպանիա) երաժշտություն գրեց անգլիացի բանաստեղծ Ու. Հ. Օդենի՝ ՄԱԿ-ին նվիրված հիմնի համար: Այդ հիմնը կատարվեց 1971թ. ՄԱԿ-ի օրը՝ ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակում: ՄԱԿ-ի օրը ազգերի խաղաղությունն ու բարեկամությունը նշելու մի առիթ է: Նաև պատեհություն է խորհելու, թե ինչ կարելի է անել, որպեսզի բարենորոգվի այս աշխարհը: Քանի որ մենք բոլորս մեր լուծման ունենք ներդրած, ապա յուրաքանչյուրս պետք է մասնակցենք ՄԱԿ-ի օրվա տոնակատարությանը:

**Գայրոցում:** ՄԱԿ-ի օրը նշելու համար կարելի է համադպրոցական կամ համադասարանային հանդիպում կազմակերպել: Եթե սովորողներ ունեք տարբեր երկրներից, նրանք կարող են հազնել ազգային տարագ, ազգային երգեր երգել կամ պարզապես պատմել իրենց երկրի մասին:

Կարելի է նաև գրույց կազմակերպել ՄԱԿ-ի գործունեության այնպիսի ոլորտների մասին, ինչպիսիք են խաղաղության պահպանումը, կայուն զարգացումը և մարդու իրավունքները:

Կարելի է նյութ ընտրել և զեկուցող հրավիրել: Ուսանողները կարող են պատրաստել տարբեր երկրների դրոշմներ, իսկ գրադարանը՝ ցուցադրի տարբեր երկրների մշակույթին վերաբերող գրքեր: Կարելի է այդ օրվան նվիրված դասարանի պատի թերթ լույս ընծայել կամ դպրոցական թերթի հատուկ համար թողարկել:

Եթե տեսաֆիլմերի հարմարություն ունեք, ապա խնդրեք ձեր ուսուցչին ՄԱԿ-ի տեղական գրասենյակի լրատվական կենտրոնի գրադարանից ֆիլմ վերցնել: Անհատականորեն կարող եք տեղական լրագրերին նամակներ գրել և ՄԱԿ-ի համար ավելի մեծ օժանդակություն խնդրել:

Ձեր օժանդակությունը ցուցաբերելու համար կարող եք միանալ ՄԱԿ-ի ասոցիացիայի տեղական բաժանմունքին: Հասարակագիտության դասի ժամանակ կարող եք ՄԱԿ-ի մոդելի ծրագիր ներկայացնել:

**Համայնքի շրջանակներում:** Սովորաբար ՄԱԿ-ի օրվա տոնակատարության ժամանակ ընդունված են դրոշ բարձրացնելու արարողությունը, համաժողովներ և սեմինարներ, երաժշտության միջազգային փառատոներ, արվեստի և արհեստի ստեղծագործությունների տոնավաճառներ, գրքերի և պարենի վաճառք կազմակերպելը:

Միաժամանակ կարելի է առաջարկել տեղական կառավարությանը ՄԱԿ-ի օրվա առթիվ ելույթ ունենալ: Ոչ կառավարական կազմակերպությունները կարող են ՄԱԿ-ի օրվա նրջանակ սահմանել խաղաղության և մարդու իրավունքների գործընթացում զգալի ներդրումների համար:

Շատ երկրներում ՄԱԿ-ի օրը տոնում են ծառատունկով, կարիքավորների համար գրքեր ու հագուստ հավաքելով և միջազգային մարդասիրական օգնության համար գումարներ հայթայթելով: Երբեմն պետությունները նշում են ՄԱԿ-ի օրը որևէ փողոց կամ զբոսայգի նրա անունով կոչելով կամ այդ օրվան նվիրված դրոշմանիշներ ու մետաղադրամներ թողարկելով:

Ամեն օր ՄԱԿ-ը հազարավոր նամակներ է ստանում աշխարհի տարբեր երկրներից:

Նամակագիրներից շատերը երիտասարդներ են, որոնք իրենց օժանդակությունն են առաջարկում կազմակերպությանը: Մյուսները Գլխավոր քարտուղարին խորհուրդ են տալիս, թե ինչպես ավելի լավ կատարի իր աշխատանքը: 1996թ. հոկտեմբերի 24-ին Հասարակական տեղեկատվության

բաժինը Գլխավոր ասամբլեայում ՄԱԿ-ի օրվան նվիրված հատուկ արարողություն կազմակերպեց: Այդ առիթով ընթերցվեց երիտասարդների գրած նամակների մի ընտրանի: Դրանց մեջ էր նաև Վաշինգտոնից (ԱՄՆ) ՄԱԿ-ի փոքրիկ աջակցի հետևյալ նամակը.

Սիրելի ՄԱԿ,

Ես գրում եմ քեզ աշխարհի պատերազմների մասին: Ինչու՞ աշխարհի ղեկավարները, մարդկանց սպանելու փոխարեն, բռնցքամարտի մրցումներ չեն անցկացնում:

Սրտանց՝

Կիթ Կոց

3-րդ դասարան

Կեպոուսինի տարրական դպրոց

Գրեեմ, Վաշինգտոն

#### **7. Ուր՞ կարելի է գրել ՄԱԿ-ի մասին ավելի շատ տեղեկություն ստանալու համար:**

ՄԱԿ-ը աշխարհի տեղեկատվություն թողարկողների մեջ գրավում է առաջին տեղերից մեկը: Նա հրատարակում է կարևոր գիտական հետազոտություններ, վիճակագրական հաշվետվություններ, տնտեսական ամփոփումներ և սոցիալական ու քաղաքական թեմաներով հաշվետվություններ:

ՄԱԿ-ը, նրա մասնագիտացված գործակալություններն ու ծրագրերը լուսաբանում են հետաքրքրություն ներկայացնող բոլոր բնագավառները՝ վիճակագրությունից մինչև սպառազինման վերահսկումը, տնտեսությունից մինչև շրջակա միջավայրը, գիտությունից մինչև միջազգային գործերը: Նա նաև ֆիլմեր, տեսաժապավեններ ու ռադիոծրագրեր է պատրաստում: ՄԱԿ-ի մասին ավելի իմանալու համար խնդրում ենք գրել.

Public Inquiries Unit, Department of Public Information, GA-57, United Nations, New York, NY 10017; fax (212) 963-0071; E-mail: [Inquiries@UN.ORGANIZATION](mailto:Inquiries@UN.ORGANIZATION)

#### **8. ՄԱԿ-ի մասին տեղեկատվությունը մատչելի ՞ է ինտերնետով:**

Այո: ՄԱԿ-ը համաշխարհային ցանցում (WWW) սեփական էջ ունի: Էջը բացված է հինգ թեմաներով՝ խաղաղություն և անվտանգություն, տնտեսական և սոցիալական զարգացում, միջազգային օրենսդրություն, մարդու իրավունքներ և մարդասիրական գործունեություն: Արագ հաղորդակցվելու մի շարք քայլեր օգտվողին հնարավորություն են տալիս մանրամասն տեղեկություններ ստանալ բազմաթիվ թեմաների վերաբերյալ, ներառյալ ՄԱԿ-ի տարբեր մարմինների, նորությունների, փաստաթղթերի և տեսալսողական ծառայությունների մասին: Իսկ ՄԱԿ-ի՝ ամբողջ աշխարհով սփռված գրասենյակների ցանցի քարտեզը թույլ է տալիս կապվել տարբեր տեղերում՝ Ժնևում, Փարիզում, Վիեննայում և Տոկիոյում գտնվող գրասենյակների և գործակալությունների հետ:

ՄԱԿ-ի էջը կարելի է բացել այսպես՝ <http://www.un.org/>.

#### **9. ՄԱԿ-ի ցանցում երիտասարդության համար նախատեսված որևէ հատուկ նյութ կա՞:**

Այո: Միաշտ միացած է ՄԱԿ-ի Դպրոցական կիբեռավտոբուս /The United Nations CyberSchoolBus/ կրթական ծառայությունը, որը պարունակում է թարմ գաղափարներ, համընդհանուր տեղեկություններ և դպրոցի համար նոր ծրագրեր: Նրա գործուն տվյալների բազան 30-ից ավելի լրատվական դաշտ ունի ՄԱԿ-ի անդամ 185 երկրների մասին: Նա նաև ամբողջ աշխարհի նկարների մի համաշխարհային պատկերասրահ ունի: ՄԱԿ-ի Դպրոցական կիբեռավտոբուսին կարելի է դիմել այսպես՝ <http://www.un.org/Pubs/CyberSchoolBus/>: Ծրագիրը ՄԱԿ-ի մոդելի մասնակիցների համար առաջարկում է քննարկման միջավայր: ՄԱԿ-ի մոդելի քննարկման տարածքը (MUNDA) երիտասարդներին հնարավորություն է տալիս միմյանց հետ Ինտերնետով մտքեր և նորություններ փոխանակել: MUNDA-ին կարելի է դիմել հետևյալ հասցեով. <http://www.un.org/Pubs/CyberSchoolBus/munda>: